ՍՎԵՏԼԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ.

Սուլթանական Թուրքիան, որի ծանր լծի տակ դարեր շարունակ տառապում էր արևմտահայությունը, XIX դարի II կեսին վաղեմի ռազմաքաղաքական փառքը կորցրած, տնտեսապես քայքայված, եվրոպական մեծ տերությունների հետ կնքած անհավասար պայմանագրերի ու պարտավորությունների ցանցի մեջ խճճված, արտաքին քաղաքական ինքնուրույնությունը կորցրած ռազմաֆեոդալական երկիր էր, ուր ծայրահեղ սրված էին սոցիալական և ազգային հակասությունները: Կառավարող շրջանների կողմից XIX դարի առաջին կեսին հաճախակի կատարած փորձերը՝ բարենորոգումների միջոցով կանխել թուրքական ֆեոդալական պետության քայքայման պրոցեսը, ապարդյուն անցան: Անգամ թանզիմաթի* ռեֆորմներն անկարող եղան կանխել սոցիալական և քաղաքական անկման այն խորը պրոցեսը, որը բնորոշ էր Օսմանյան կայսրությանը սկսած XVIII դարի վերջերից:

Թուրքիայում գերիշխող ֆեոդալական արտադրահարաբերությունները կաշկանդում էին թուրք և հպատակ ժողովուրդների ստեղծագործական ունակությունների զարգացումն ու ծավալումը:

Ռազմաֆեոդալական Թուրքիան, նրա սոցիալական հենարանը կազմող բեկերն ու փաշաները արգելակում էին ներքին առաջադիմական ուժերի զարգացումը: Սուլթանական վարչակարգի հենարանը կազմում էին խոշոր ֆեոդալներն ու մահմեդական բարձրաստիճան հոգևորականությունը: Սուլթանի հպատակների կյանքի ու գույքի ապահովության որևէ իրական երաշխիքի բացակայությունը, վարչական սանձարձակ անկանոնությունն ու պետական ապարատում տիրող ահավոր կաշառակերությունը աբդուլհամիդյան վարչակարգի բնորոշ գծերն էին, որոնք Օսմանյան կայսրությունը դարձրել էին անօրինության ու կամայականության երկիր: Ինքնակալության հեղձուցիչ մթնոլորտն ընդգրկել էր հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Քաոս՝ կյանքի բոլոր բնագավառներում, բռնություն՝ ամենուրեք: Համատարած

*XIX դարի 30-50-ական թվականներին սուլթանների կողմից հրատարակված ռեֆորմներ:

լրտեսական ցանցով էր պատված երկիրը: Կայսրությունում ստեղծվել էր քաղաքական ճնշման, հետապնդումների, բարբարոսական հաշվեհարդարների ու ծախվածության թունավոր մթնոլորտ:

Դարեր շարունակ թուրքական պետության արտաքին նվաճումներին, զավթողական պատերազմներին և ավարառություններին զուգընթաց մահմեդական ոչ միայն վերնախավերի, այլ անգամ զանգվածի մեջ ներարկվել էր այն մտայնությունը, որ խաղաղ կյանքը, արտադրողական աշխատանքը միայն «անհավատին», հպատակ ժողովրդին է հատուկ և արժանի է արհամարհանքի: Տիրում էր այն մտայնությունը, թե «արտոնյալ» Թուրքը պետք է կյանքի նպատակը տեսնի ավարի, բռնության և զենքի հաղթանակի մեջ: Այլ կերպ ասած, բարբարոսական կյանքին հատուկ սովորույթը՝ թալանը, որպես ապրուստի և հարստություն կուտակելու հիմնական միջոց, մնացել էր գերիշխող:

Օսմանյան բռնակալությունն իր ավատական հասարակական հարաբերություններով չէր կարող շատ թե քիչ նպաստել ինչպես երկրի էկոնոմիկայի զարգացմանը, այնպես էր քաղաքակրթության առաջընթացին՝ առհասարակ, և միայն քաղաքական ու ռազմական գերիշխանությամբ էր, որ կարողանում էր պահել իր դիրքը: Մահմեդական կառավարողները հենց սկզբից անհանդուրժելի էին համարում քրիստոնյաների իրավահավասարությունը: Հպատակների հետ կնճռոտ հարցերի լուծման ժամանակ նրանք միշտ դիմում էին սրին, բայց ոչ բանականությանը: Հարատև անիշխանությունը, անապահով կյանքը, արհամարհանքն ու հալածանքը հպատակ ազգերի նկատմամբ խարխլում էին պետության հիմքերը: Սուլթաններն ի սկզբանե անհնազանդ ազգերին արմատապես բնաջնջելու և ապստամբ ոգին խեղդելու ծրագրեր էին մշակել: Բանտերի խավարում և աքսորների անհայտության մեջ անլուր հալածանքների էր ենթարկվում ժողովրդի առավել սթափ ու ըմբոստ մասը, հատկապես՝ մտավորականությունը:

Այնուամենայնիվ, չնայած ստեղծված ծանր դրությանը, սուլթանական կայսրությունում առաջադիմություն նկատվում էր և դրա հիմնական կրողները հպատակ ժողովուրդներն էին, որոնք, արդեն, հատկապես առևտրական կենտրոններում, առնչվում էին կապիտալիստական տնտեսական հարաբերություններին:

Օսմանյան Թուրքիայի պատմությանն ու կյանքին լավատեղյակ Արշակ Չոպանյանը գրում է. «Զինվորական – կրոնական մոլեռանդ ու տարամերժ մտայնության մը մեջ պարփակված, թուրքը խոհեմ նկատեց իրեն միայն վերապահել զինվորական ու վարչական ասպարեզները, ու վաճառականությունը, արհեստները, դրամական գործառնությունները, գեղարվեստները,

ամեն ինչ որ չարաչար աշխատանք և մտավոր ճկունության կը պահանջեր և իրեն ծանծրալի ու ստորին կը թվեր, փաթթել իր ոչ մահմեդական հպատակներուն վզին: Ատով թուրքը մեկ կողմեն պատճառ եղած է թե՛ իր քաղաքակրթապես ետ մնալուն և թե՛ իր բայաներուն, հակառակ արգելիչ ռեժիմին, աշխատանքի ու արտադրության շնորհիվ՝ քաղաքակրթական հատկությանց մարզվելուն ինչպես և անոնց ազգային ինքնության պահպանվելուն. բայց մյուս կողմե՝ անոնց հասուցած է չարիք մը, որ մեծագույնն է չարիքներուն... «Ստրուկ» ըլալնին անոնց զգացնելու համար ոչ մեկ միջոց չէ խնայած...»[1]:

Սակայն, այս ամենով հանդերձ, Թուրքիայի տնտեսական կյանքը հիմնականում քրիստոնյաներն էին տնօրինում: Հայերը զբաղվում էին բանկային և արտադրական գործերով, միջնորդ առևտուր էին անում: Արհեստները նույնպես քրիստոնյաների զբաղմունքներն էին: 80-ական թվականներին աշխուժացել էին նաև թուրք գործարարները, բայց նրանց գործիմացությունը, գործառնությունների ծավալը զգալիորեն զիջում էին և՛ հունականին, և՛ հայկականին: Եվ սա էր հիմնական պատճառը, որ Յըլդըզը /սուլթանական արքունիքը – Ս.Գ./ չէր հովանավորում երկրի արտադրողական ուժերի, արդյունաբերության զարգացումը, քանի որ այն մեծապես կնպաստեր հպատակ ժողովուրդների տնտեսական զարգացմանը, մի բան, որ ամենևին էլ սուլթանների օգտին չէր: Տնտեսական ոլորտում հպատակների գերազանցությունը կարող էր ապագայում վտանգի տակ դնել վարչական և ռազմական ոլորտներում թուրքերի մենաշնորհը:

Թուրքիայում հատկապես քրիստոնյա արդյունաբերողը չէր պաշտպանվում պետության կողմից: Չկար նրա արտադրանքի ու վաճառքի, նրա կյանքի ապահովության որևէ իրական երաշխիք: Ճանապարհներին վխտում էին ավազակախմբերը: Երկար լեռնանցքներով անցնող քարավանային ուղիներում դարանակալ ավազակները կարող էին ամեն րոպե սնանկացնել ամենահարուստ առևտրականին անգամ: Արդյունաբերության և առևտրի զարգացմանը կաշկանդում էին ոչ միայն մահմեդական և քրիստոնյա ձեռնարկատերերի ու առևտրականների միջև դրվող բացահայտ խտրականությունն և օտարերկրյա առևտրականների արտոնությունները, այլ նաև՝ ծանր հարկերն ու մաքսային բարձր սակագները: Եվրոպացի առևտրականները, նրանց հանձնակատար դարձած արևմտահայ գործակալները մրցության մեջ հեշտությամբ ասպարեզից հանում էին տեղական արդյունաբերողներին և գավառահայ երբեմնի խոշոր առևտրականներին:

---

[1] Չոպանյան Ա., Մկրտիչ Պեշիկթաշյանի կյանքը և գործը, էջ 12:

Օսմանյան կառավարող շրջանները աշխատում էին խորացող ֆինանսական ճգնաժամը հարթել արտաքին փոխառություններով՝ տարեցտարի ավելացնելով պարտքերը: Ղրիմի պատերազմից հետո թուրքերի արտաքին պարտքը հսկայական չափերի հասավ: Այն ավելի մեծացավ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, և 1879 թվականին Թուրքիան վերջնականապես սնանկացած հայտարարվեց: 1881թ. ստեղծվեց օտոմանյան պարտքի մարման վարչություն՝ կազմված պարտապան երկրների ներկայացուցիչներից, որն ուներ պետական ապարատի իրավունքներ: Դրանով, փաստորեն, Թուրքիան զրկվեց տնտեսական ինքնուրույնությունից[2]: Երբ եվրոպական տերությունները Բ. Դռանը հիշեցնում էին պարտքերի մասին, անմիջապես կրկնապատկվում էին հարկերը Հայաստանում: Կիսագաղութի վերածվող, եվրոպական հզոր տերությունների կողմից շահագործվող Օսմանյան կայսրությունն ինքն էլ իր հերթին էր հանդես գալիս հպատակ ժողովուրդներին ստրկացնողների դերում:

Պարտքերը մարելու համար հիշյալ վարչությունն իրավունք ուներ գանձելու պետական հասույթները և ակտիվորեն միջամտում էր Թուրքիայի ներքին գործերին: Ներմուծվող ապրանքների մաքսը աննշան էր, իսկ երկրի ներսում արդյունաբերվող ապրանքների վրա կառավարությունը ծանր հարկ էր դնում[3]: Թուրքիան հիմնականում վեր էր ածվել եվրոպական պետություններին սպասարկող կիսագաղութի, նրանց ագրարահումքային կցորդի:

Օտարերկրյա կապիտալը կործանարար էր ազդում երկրի ներքին տնտեսական կյանքի ընթացքի վրա և արգելակում նրա զարգացումը: Թուրքիայում մեքենայացված արդյունաբերությունը հիմնականում բավարարում էր զենքի, ռազմամթերքի, սարքավորումների վերաբերյալ բանակի պահանջը, իսկ մնացած արդյունաբերությունը, համարյա ամբողջությամբ, արտադրում էր լայն սպառման առարկաներ՝ գործվածքեղեն, թել, գորգ, ամանեղեն: Եվրոպական կապիտալը Թուրքիայում հենվում էր մինչկապիտալիստական, կիսաֆեոդալական շահագործման ձևերի վրա՝ պահպանելով նաև գյուղատնտեսության հետամնացությունը, կեղեքելով գյուղի ընչազուրկ զանգվածներին:

Եվրոպական զարգացած տերությունների պարտադրած ստրկացուցիչ համաձայնագրերի, կապիտուլյացիաների պատճառով Թուրքիան զրկված էր մրցակցության դեմ ուղղված միակ զենքից՝ պրոտեկցիոնիզմից, որին սովորաբար դիմում են արդյունաբերական տեսակետից թույլ պետությունները: Նա

---

[2] Տե՛ս Еремеев Д., На стыке Азии и Европы, М. 1980, с. 120

[3] Տե՛ս Նալբանդյան Մ., երկերի լիակատար ժողովածու, եր., 1940, հ.3, էջ 66:

իրավունք չուներ ոչ ավելացներ մաքսերը, ոչ հարկել արտասահմանյան առևտուրը, ոչ էլ թուրքական դատարանին ենթակա դարձնել օտարերկրացուն, որն, ասենք, դատավեճ է ունեցել օսմանյան հպատակի հետ կամ, նույնիսկ՝ հանցանք է գործել[4]:

Իրերի նման դրությունը դժվարացնում էր Թուրքիայում նոր արտադրահարաբերությունների ազատ զարգացումը: Դաժանորեն ճնշված ժողովուրդները Թուրքիայում զրկված էին կապիտալիստական առաջընթացի դրական արդյունքներից օգտվելու հնարավորությունից:

Այնուամենայնիվ, XIX դարի II կեսին արևմտահայերի կենցաղում որոշ արհեստներ կատարելագործվեցին: Արհեստների և առևտրի կարևոր կենտրոններ էին Կարինը, Վանը, Բաղեշը, Մուշը, Խարբերդը: Այսպես, Վանի արհեստավորները հայտնի էին ոսկու և արծաթի հրաշագեղ աշխատանքներով: Խարբերդի գորգագործների նրբաճաշակ աշխատանքները մեծ համբավ ունեին անգամ եվրոպական շուկաներում: Զարգացան կահույքագործությունը, դերձակությունը, կոշկակարությունը[5]: Պղնձագործության կարևոր կենտրոն էր Եվդոկիան: Անցյալ դարի երկրորդ կեսին արևմտահայ արդյունաբերական ու առևտրական դասի առջև ծառացավ մեկ այլ դժվարության ևս: Դա նոր զարգացող թուրք ազգային բուրժուազիան էր, որը, շփվելով Արևմտյան Եվրոպայի հետ, սկսել էր ըմբռնել, որ հասարակական առաջադիմության շարժիչ ուժը կարող է լինել միմիայն արտադրողական աշխատանքը և փորձեր էր անում իրեն դրսևորել այս բնագավառում[6]:

Անշուշտ, հայերի մտավախությունը տնտեսական ասպարեզում մրցությանը չէր վերաբերում: Այս ոլորտում անհաստատ քայլեր անող թուրք ազգային բուրժուազիայի հետ մրցելու հարցում անհանգստանալու հիմք չունեին նրանք: Ավելին, դարերի փորձ, հմտություն ունեցող և ձեռներեց հայերը հեշտությամբ էին դուրս մղում առևտրական և արդյունաբերական բարձրունքներին ձգտող թուրք գործարարներին: Բայց հենց այս հանգամանքն էլ գրգռում էր վերջիններիս և նրանք խեթ – խեթ էին նայում հայ առևտրականների հարստությանը: Լինելով «արտոնյալ» ազգի ներկայացուցիչներ, նրանք հայերի նկատմամբ հազար ու մի խոչընդոտ էին ստեղծում, նրանց դեմ տրամադրում տեղական թուրք կառավարիչներին և մահմեդական մոլեռանդ ամբոխին՝ գրգռելով նրանց կրոնական զգացմունքները: Այրելու, թալանելու, սպանելու և

---

[4] Տե՛ս Երեմեև, Թուրքերի ծագումը, Եր., 1975, էջ 240-241:
[5] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Եր., 1981, էջ 61:
[6] Տե՛ս Тыркова А. Старая Турция и младотурки, П., 1916, с. 131.

այլ միջոցներով նրանք ջանում էին արհեստականորեն դուրս մղել հայերին մրցության ասպարեզից: Թուրք բուրժուազիան, լինելով թույլ կազմակերպված և անկարող տնտեսական միջոցներով մրցելու այլազգի բուրժուազիայի հետ, պահանջում էր ֆեոդալական պետական ապարատից՝ բռնի միջոցներով մեկուսացնելու իր հակառակորդներին և ազատելու ասպարեզը, ճանապարհ հարթելու ազգային շուկայում իր համար: Զարգացած կապիտալիստական երկրներին ոչ բնականոն այս ուղին սովորական էր Արևելքի շատ երկրների և մասնավորապես՝ Թուրքիայի համար: «Մշակի» թղթակցություններից մեկում կարդում ենք՝ էրզրումում հրապարակի մեջ թուրքերն ամբոխի աչքի առջև սպանեցին Խաչատուր էֆենդի Պաստրմաջյանին միայն այն բանի համար, որ նրա առևտրական գործերը հաջող էին ընթանում, և թուրքերը չէին կարող առանց նախանձի նայել այդ բանին[7]:

Հպատակ հայերին տնտեսական հենարանից զրկելուն էր հետամուտ սուլթանական կառավարությունը, որի նպատակն էր »լախտի մը հարված« տալով /Ռ.Երամյան/ նրանց այնպիսի վիճակի հասցնել, որ ի վիճակի չլինեն կառավարության դեմ որևէ վտանգավոր քայլի դիմել և համակերպվեն իրենց ողորմելի գոյության փաստի հետ: Այդ են վկայում Արևմտյան Հայաստանի մի շարք ծաղկած առևտրական քաղաքների փայտաշեն շուկաներում հաճախակի բռնկվող հրդեհները /Վանում՝ 1876թ., Բաղեշում՝ 1882թ., Եվդոկիայում՝ 1882թ. և այլն/: Ժամանակակիցների հավաստի վկայություններով, դրանց կազմակերպիչները սուլթանական կառավարության պաշտոնյաներն ու նրանց գործակալներն էին, քուրդ ցեղապետներն էին: Իսկ տեղի կայազորն արգելում էր հայերին մոտենալ սեփական խանութներին; ամենակուլ բոցերից փրկել իրենց հարստությունը: Ծայր էին առնում ահավոր թալան ու կողոպուտ: Կան վկայություններ անգամ այն մասին, որ այդ կողոպուտները սկսվում էին մինչ հրդեհը[8]: Երբ սկսվեց ռուս – թուրքական պատերազմը, 1877 թ. սկզբներին սուլթանական կառավարությունը Մարկոս Աղաբեկյանին ուղարկեց Վան, որպես Վանի Նահանգապետ Հասան փաշայի օգնական: Դրանով փորձում էր վանեցիներին սիրաշահել և հատկապես հրդեհի թողած տպավորությունները մեղմել[9]:

---

[7] Տե՛ս Մշակ, 1880, №5:

[8] Այս մասին հանգամանորեն տե՛ս Երամյան Հ., Հուշարձան Վան – Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929, Ճանկուլյան Յ., Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ.Պոլիս, 1913, մասն Ա, էջ 14, Սարուխան, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 195, Մշակ, 1876, №49, 1877, №5:

[9] Տե՛ս Երամյան Հ., Հուշարձան Վան – Վասպուրականի, էջ 93:

Ինչպես ամբողջությամբ վերացրած Թուրքիայի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որը գտնվում էր ծայրահեղ հետամնաց վիճակում: Օգտագործելի հողատարածությունը չնչին տոկոս էր կազմում, և այն էլ մշակվում էր նախնադարյան արտադրամիջոցներով[10]:

Աննկարագրելի ծանր էին հայ գյուղացիների կյանքի ու աշխատանքի պայմանները: Մեծ դժվարությամբ էին նրանք առաջ տանում տնտեսությունը: Շարունակում էին պապերից եկած զբաղմունքները՝ ցանում ցորեն, գարի, բրինձ, վարսակ, բամբակ, ծխախոտ, զբաղվում էին այգեգործությամբ ու անասնապահությամբ:

Արևմտահայերի ազատագրական նկրտումների դեմ պայքարելու, ինչպես նաև սուլթանիզմին վստահելի սոցիալական հենարան ստեղծելու նպատակով /հատկապես 1877 – 1878թթ. ռուս – թուրքական պատերազմից հետո/ Աբդուլ Համիդը Արևմտյան Հայաստանում մեծ արտոնություններ տվեց քուրդ ցեղապետներին: Վերջիններիս ընդգրկելով «համիդիե գնդերի» մեջ, տարբեր ճանապարհներով նպաստում էր, որպեսզի նրանք բռնագրավեն հայերի հողերը, դառնան խոշոր ֆեոդալներ:

Հայերին արդեն տեսանելի էր, որ կառավարության դրդմամբ են քրդերը բարբարոսություններ գործում հայերի նկատմամբ: Թուրքական կառավարությունը բոլոր միջոցներով խոչընդոտում էր քրիստոնյաներին և հատկապես հայերին հողատեր դառնալ:

Արևմտահայերի հողազրկման պրոցեսն ահավոր չափերի հասավ 70 - 80-ական թվականներին: Բռնագրավելով հայ գյուղացու հողը, աղաները նրան օգտագործում էին որպես աշխատուժ, կիրառելով աշխատանքի ոչ թե վարձու, այլ ֆեոդալական ձևերը: Ֆինանսական ճգնաժամ ապրող սուլթանական կառավարության եկամուտի հիմնական աղբյուրը ֆեոդալական ռենտան էր և քիչ չէր պատահում, երբ հարկահանները երկու - երեք անգամ էին գանձում միևնույն հարկը: Հիմնական հարկերից բացի հաճախ աշխատավորներից գանձվում էին արքունական շինությունների, զորքի տեղափոխման և այլ պատահական հարկեր: Նման հարկային քաղաքականությունն ուղղակի արմատախիլ էր անում գյուղատնտեսությունը:

Հարկերը սահմանվում էին գյուղացիների հնարավորություններից շատ ավելի բարձր չափերով, ունևոր գյուղացիները հարկերի քիչ մասն էին վճարում: Դրանց մեծագույն մասն ընկնում էր չքավոր գյուղացու անկարող

---

[10] Տե՛ս Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 69:

ուսերին: Վասպուրականի հայերը հուսահատորեն գրում են. «...գնաց մեր պատիվը, պղծվեցան մեր եկեղեցիները, առևանգեցին մեր հարսներին և երիտասարդներին, մեր վանքերը մեզնից խլեցին, մեր ազգի սերունդը իսպառ ջնջել են ուզում: Այս ամենի պատճառով կամ պետք է մեռնել ու չտեսնել այս սարսափելի վիճակը, կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց ...Ստացվածքնիս ու վաստակնիս մերը չէ»[11]:

Առավել ծանրացավ գյուղացիների վիճակը, երբ, կապված ապրանքադրամային հարաբերությունների զարգացման հետ, հարկերի մի մասը պահանջվեց վճարել դրամով: Դա արվում էր հատկապես այն ժամանակ, երբ գյուղատնտեսական բերքը արժեզրկվում էր: Իսկ երբ բերքի արժեքը մեծ էր, կառավարությունը հարկը գանձում էր բնամթերքով: Դրամով գանձվող հարկը մի կատարյալ պատուհաս էր գյուղացու համար:

Վաշխառությունը Թուրքիայում այնքան մեծ շահույթ էր բերում, որ փաստեր կան այն մասին, թե դրանով սկսել էին զբաղվել անգամ օտարերկրյա դեսպանատների աշխատակիցները /միջնորդների օգնությամբ, իհարկե/: Անօգնական գավառահայի վիճակն այնքան թշվառ ու հուսահատ էր, որ նա «փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում», - գրում է Մ.Նալբանդյանը[12]: Այս ամենի հետևանքով սովը հաճախակի երևույթ էր:

Սովն ահավոր չափերի հասավ և մեծ տարածքներ ընդգրկեց հատկապես 1880թ. գարնանը: «Նոր տարին սև քողով կբացվի« սովի առիթով այսպես գրեց «Արևելյան մամուլը»[13]: «Մշակին» շարունակ տագնապալի թղթակցություններ էր ուղարկվում Թուրքիայից: «Վանի մեջ սովը հասել է այն կետին, - կարդում ենք թղթակցություններից մեկում, - որ յուրաքանչյուր օր քաղաքի Այգեստան ասված մասում մի քանի հատ դիակներ են գտնում այն թշվառ երեխաների և ծերերի, որոնք թափառում են գետնի միջից բույսերի արմատներ հանելու և նրանց մեջ կերակուր գտնելու համար»[14]: Գրիգոր Արծրունին ահավոր սովի պատճառը ոչ թե տարերային աղետն էր համարում /երաշտ, մորեխ և այլն/ այլ թուրքական կառավարության քաղաքականությունը, որը ծրագրել էր հայաթափ անել Հայաստանը: «Հենց որ սովը հայտնվեց, - գրում է Արծրունին, - Բ. Դուռը հրաման արձակեց արգելել հացի մուտքը Ռուսաստանից և Պարսկաստանից և աղքատացած ժողովրդից սկսեց հարկը պահանջել ոսկով ու արծաթով, շրջանառությունից հանելով թղթադրամը: Ի լրումն այս ամենի,

---

[11] Դիվան հայոց պատմության, հ.13, էջ 269:
[12] Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ.3, էջ 103:
[13] Արևելյան Մամուլ, 1880, հունվար, էջ 432:
[14] Մշակ, 1880, №19:

արգելեց լրագրերին գրել սովի մասին և արգելեց ռուսահայ լրագրերի մուտքը Թուրքիա»[15]: Ամբողջ Արևմտյան Հայաստանն էր տնքում սովից, իսկ վարչական մարմիններն իրենց անտարբերությամբ և հակահայկական քաղաքականությամբ վիճակը մղձավանջային էին դարձնում: Սովն ու անարխիան ավելի սանձարձակ դարձրին քուրդ հրոսակախմբերին, որոնք անպատիժ հարձակումներ էին գործում և թալանում հացահատիկի ամբարները՝ օրհասական վիճակի հասցնելով արևմտահայերին:

Արևմտահայերի գրավոր ու բանավոր աղերսանքները ստիպում էին պատրիարքին բազմիցս դիմել Բ. Դռանը, անձամբ այցելել սուլթանին և խնդրել փոքր – ինչ բարելավելու գյուղացիների վիճակը և ազատելու նրանց քուրդ ցեղապետների բռնություններից: Վերջիններս չէին ճանաչում կառավարական ոչ մի օրենք: «Տեսնված չէ, - գրում է Արսեն Թոխմախյանը, - որ մի քուրդ դատաստանատուն դիմե: Ամեն մի քուրդ մարդ ինքը իր համար օրենք է, ինքը իր համար պատժական ուժ է»[16]: 1876թ. սեպտեմբերին Կ. Պոլսում հրատարակվեց «Տեղեկագիրք գավառական հարստահարության« գրքույկը, որը քաղված էր պատրիարքարանի արձանագրություններից և այնտեղ ամփոփված էին 25 տարվա ընթացքում /1852-1876թթ./ Բ. Դռան և պատրիարքարանի միջև կայացած պաշտոնական բանակցությունները: Գավառներից ստացած բազմահազար բողոքներից 58-ի մասին պատրիարքը թագրիր /խնդրագիր/ էր գրել սուլթանին, որից և ոչ մեկը դրական լուծում չէր ստացել[17]:

Թուրքիայում անցյալ դարի երկրորդ կեսին ֆեոդալական շահագործմանը զուգընթաց գոյություն ունեին նաև ազգային ճնշման դաժան ձևեր՝ ընդհուպ մինչև հպատակների մարդկային տարրական իրավունքների լիակատար ոտնահարումը: Դրությունն այստեղ ավելի էր բարդացնում կրոնական մոլեռանդությունը:

Թուրքիայում, ուր դրված էր ոչ մահմեդական ժողովուրդների լինել – չլինելու հարցը, սոցիալ – քաղաքական պայքարը հիմնականում ընդունեց ազգային և կրոնական ձև, իսկ կրոնական մոլեռանդությունը պատճառ դարձավ արյունահեղ ընդհարումների: Թուրքական կառավարությունը ոչ միայն չէր խանգարում այդ մոլեռանդության խորացմանը, այլև մեծ չափով շահագրգռված էր դրանով, նպատակ ունենալով այդ քողի տակ թաքցնել երկրում խորացող քաղաքական ու սոցիալական կնճռոտ խնդիրները:

---

[15] Մշակ, 1880, №108:
[16] Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 71:
[17] Տե՛ս Մշակ,1878, №147:

Մահմեդական կրոնը ծառայում էր ինչպես ազգային խտրականությունը հիմնավորելու, այնպես էլ՝ ոչ մահմեդականների անձի և գույքի անձեռնմխելիությունը բացառելու իրավական և բարոյական հիմք: Ավելին, պետական օրենքների հիմքում էին դրված Ղուրանի անփոփոխ դոգմաները և անգամ քրիստոնյա օտարերկրացու կյանքը Թուրքիայում կարող էր վտանգի տակ լինել: «Իսլամը, - գրում է Սարուխանը, - մահմեդական կրոնը, թուրք պետության ուղղություն տվող միակ լծակն է եղել: Ղուրան և քաղաքացիական օրենք՝ նույն բաներն էին, ազգային պետական կազմակերպությունը մահմեդական վարդապետության հետ մի մարմին կազմելով՝ առել էր այս վերջինի անշարժությունը»[18]: Ժամանակի մամուլում, հրապարակախոսությունում, ուսումնասիրություններում այս հարցին կարևոր նշանակություն էր տրվում: Ղուրանը մեծ չափով արգելակում էր թուրքիայի հասարակական հարաբերությունների տեղաշարժին և առաջընթացին: Առավել ծանր էին դրա թողած հետևանքները հպատակ քրիստոնյաների համար: Այս առիթով Ռաֆֆին գրում էր՝ «Թուրքիայի մեջ ոչ մահմեդականների վերաբերությամբ իրավունքի պաշտպանություն և դատարանի մեջ անարդարություն կտիրե միշտ, քանի, որ դատավարության մեջ տիրում է շարիաթի օրենքը»[19]: Հանդես բերելով պատմական մոտեցում, նա իրավացիորեն գտնում էր, որ օրենքը պետք է տվյալ ժողովրդի հասարակական – քաղաքական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերին համապատասխան փոփոխություն կրի:

Սուլթանական վարչակարգը քրիստոնյա հպատակների և մուսուլման ժողովուրդների միջև ստեղծել էր իրավական ու քաղաքական այնպիսի փոխհարաբերություններ, որ տիրապետող թուրքական վերնախավը քրիստոնյաներին նայում էր որպես աստծո կողմից ստրկության դատապարտված մի զանգվածի, որի շահագործումն ու կեղեքումը համարվում էր «բնական»:

Անտարակույս, ազատ չէր նաև ինքը՝ տիրապետող թուրք ժողովուրդը: Նա գտնվում էր ասիական ամենահետամնաց, տգետ վիճակում, գերի՝ կրոնական նախապաշարումներին, անհաղորդ Արևմուտքի լուսավորությանը: Սակայն Թուրքիայում անգամ սոցիալապես ճնշվող մահմեդականն այն աստիճան մոլեռանդ էր, որ հավատում էր, թե ինքը արտոնված է մարգարեի կողմից, իսկ ոչ մահմեդականները «ռայա» են: Սա մեծապես խանգարում էր ընդհանուր չարիքի դեմ պայքարի միասնությանը:

---

[18] Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 78:
[19] Մշակ, 1878, №163:

Թուրք աշխատավորը, երբ ոտնահարվում էին նրա շահերը, իրավունք ուներ բողոքելու, և դատարանը լսում էր նրա պահանջը: Այլ էր հպատակ քրիստոնյայի վիճակը: Օրենքը նրա վրա չէր տարածվում, նա բողոքելու, օրինականություն պահանջելու համարյա իրավունք չուներ: Մահմեդական վերնախավերն արտոնված էին, կարող էին ամեն տեսակ ապօրինություն թույլ տալ հայերի նկատմամբ, սպանել, գողանալ, թալանել, բռնագրավել կալվածքը, տունը, իսկ կողոպտված հայի բողոքը անհետևանք էր մնում: Հայերի վկայությունները դատարանը չէր ընդունում: «...Տաճկաստանում ուժ ու զորություն ունի միայն մահմեդականը, - գրում է «Մշակը»: - Մահմեդականը վայելում է օրինական առանձնաշնորհություններ, որից զուրկ է քրիստոնյան: Օրինակ, նա կարող է անթիվ վկաներով իրան արդարացնել, բայց հայի վկայությունը չէ ընդունվում: Եվ վկայությունը մահմեդական օրենսդրության մեջ մեծ դեր է խաղում... Ամեն մահմեդական կարող է ցանկացած հային կողոպտել. վկաներ նրա համար պակաս չեն լինի և ինքն դատավորը կնպաստե նրա չարագործությանը, որովհետև ստացած արծաթի մի մասն էլ իրան է պատկանում»[20]:

Համառոտակի ահա այսպիսին էր արևմտահայերի սոցիալ – քաղաքական կացությունը, և այս ամենի մեջ էին ժամանակի առաջավոր մտավորականները տեսնում այնքան զանգվածային դարձած պանդխտության պատճառները:

«Բարեխնամ» սուլթանական կառավարությանն արած բազմահազար անհետևանք բողոքագրերը արևմտահայերին վերջնականապես ապացուցեցին, որ բռնակալության լծից արդարություն և ազատություն ակնկալելու միակ միջոցը զինված պայքարն է: Գնալով այս տեսակետը տիրապետող էր դառնում: «Ալ ինչ կսպասենք, - գրում էին Վասպուրականի հայերը, Կ. Պոլսի պատրիարքին, - կյանք չունինք մահե կվախնանք»[21]:

---

[20] Մշակ, 1878, №163:
[21] Դիվան հայոց պատմության, հ. 13, էջ 269: